ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«12» ապրիլի 2012 թ. N 96

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 12-ի N501-Ն որոշման 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի քանդման ենթակա, Շահումյան փողոցի վթարային NN 11 և 13 բազմաբնակարան շենքերի բնակիչներին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի պահածոների գործարանի նախկին վարչական շենքի բնակարանները հատկացնելու գործընթացի ապահովման համար համապատասխան պայմանագրերի կնքումն իրականացնելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Կ. Դանիելյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել տաս աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հանձնաժողովին (Կ. Դանիելյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և բնակարանային կոմունալ հարցերի բաժնի պետ Ա. Աբգարյանին և քարտուղարության բաժնի պետի տեղակալ Տ. Պողոսյանին (համաձայնությամբ):
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Մ. Քարտաշյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2012 թվականի դեկտեմբերի 12-ի
N 96 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Կ. Դանիելյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ.

Անդամներ՝

Յու. Մանվելյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբական բաժնի պետ.
Գ. Գևորգյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ.
Վ. Ալեքսանյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի աջողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ***Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***